


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՅՃ.
Գաւառացի 10 ՄՅՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՅՃ.
Գաւառացի 5 ՄՅՃ.
Ծանուցման տարւոյ մէջ անդամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Անցեալ հինգշաբթի և ուրբաթ օ-
րերը Բլեքիայի մէջ մեծ պատերազմ
ներ եղան, զորս վիտինի հրամանա-
տար Օսման փաշան իւր յուլիս 7ի և
8ի հեռագրաւորներովը կը ծանու-
ցանէ : Հինգշաբթի աւուր, պատե-
րազմը ժամը 3էն մինչև 42 տեւեր է,
երկու կողմէ սաստիկ կրակով : «Կայ-
սերական զօրաց արիական դիմադը-
րութիւնը, կըսէ Օսման փաշա, մեծ կո-
րուստ տուաւ թշնամոյն, որ իւր դիր-
քը թողով ետ քաշուեցաւ :» Հետեւ
եալ առաւօտուն, Ռուսը աւելի մեծ
բազմութեամբ երեք կողմէ Օսմանեան
զօրաց վրայ յարձակեր են, արեւը
ուսշա պատերազմ մ'եղեր է մինչև
ժամը 7, և թշնամին չկրնարով Օսմ-
ան զօրաց սաստիկ կրակին դիմանալ ան-
թիւ կորստեամբ, յետո նահանջեր է-
ն Օսման փաշան կը ծանուցանէ նաև թէ
կայսերական զօրքը Ռուսերէն տասն
և եօթն ուղղ լցուն ուղղմամբ երեք և
բազմ կողմէ պարտուած են :

Պաշտօններէն առջին չգիտցուի
թէ Ռուսը մինչև ո՛ր յառաջացած
են, սակայն չորեքշաբթի օրը Ֆիւլ-
պէէն թիւղանով ծայն կը լսուէր :
Կերէն որ Ռուսը 'ի սկզբան ցոյցի մը
համար Շիրքայի կրճին վրայ յարձա-
կեր և 'ի խալին—Պոլսոյ մէջ անցեր էին :
Սակայն յետո Շիրքայի ալ անցան
և Գըզալըղի ու Ֆիւլպէի մէջ տեղի
եղած երկիրներն արշաւեցին :

Ռուսաց այս արշաւանքն Օսման-
եան զինուորական միջոցները փու-
թացուց, և բարձր հրամանատարաց
քանի մը փոփոխութիւններ եղան :
Գարատաղէն վերադարձող Մէհմետ
Ալի փաշան ուրբաթ օրը մայրաքա-
ղաք հասաւ, և Սերքէն-խիւթէի
կայարանը Բ. Մեծ-Եղարքունէն, ար-
տաքին գործոց նախարարէն և Կ.
Պոլսոյ քաղաքապետէն դիմաւորուե-
լով երբորդի կայսերական պալատը
գնաց, ուր պատիւ ունեցաւ վեհ-Սուլ-
թանին ներկայանալու, և նոյն օրը
կայսերական ֆէրմէի փխալէ չոգե-
նաւով, (որուն սնունդ փոխուելով
Սթամբուլ գրուած և պատերազմա-
մական փոխադրութեանց յատկացած
է) վառնա և անկից Շուքուդէնացի
Մէհմետ Ալի փաշա Դանուրի եղբը
գտնուող Օսմանեան զօրաց հրամանա-
տար կարգուեցաւ, իսկ Սերտար էք-
րէմ կարգուեցաւ Բ. Մեծ-Եղարքուն-
ի Բալիկ փաշաներն, որոց պաշտօնան-
կութիւնը ծանուցած էինք, Սիւրէյ-
եա չոգեհնաւով մայրաքաղաքս բեր-
եցան վեհ-Սուլթանին բանակի օգ-
նականներէն թահիր պէյի պահ-
պանութեամբ, և Սթամբուլ քաղաքին
խօսքին նայելով արտա պիտի երթան
եղեր, քանի 'ի նամը փաշային մէկ

տեղեկագիրն այս երկու բարձր հը-
րամանատարաց յանձնարութեան վը-
րայ կասկած չթողուր եղեր : Այս լը-
րերը տակաւին ստուգութեան կարօտ
են, թէ և քանի մ'օրէ 'ի վեր ընդ-
հանուր խօսակցութեան նիւթ եղած
են :

Պաշտօնի Օսմանեան բանակին հը-
րամանատար Սուլթան փաշան Գա-
րատաղէն դարձող զօրաց մէկ մասին
հետ Տէպէ-Աղաճի երկաթուղով հի-
մա պատերազմի ասպարէզն հասած է,
սակայն տակաւին Պաշտօններէն պա-
տերազմական լուրեր չկան, թէ և ընդ-
հանուր վստահութիւն կայ որ Ռու-
սաց արշաւանքն ետ պիտի մղուի :

Ռուսաց Պաշտօններէն տեղին անց-
նիւն Անդրուի մէջ հասարակաց կարծ-
եաց մէկ մասին և քանի մը լրագրաց
Մօրինիկ Բօսթի, Տէյի թէ չէ կրակի և
Սթամբուլի բաւական յուզմունք տը-
ւաւ : Բայց կը կարծուի թէ խորհրդ-
դարան իւր նիստերը պիտի դադ-
րեցնէ առանց Արեւելեան խնդրոց
նկատմամբ որոշում մը տալու : Կըս-
ւէր թէ Անդրուի նախարարաց մէջ
կարծեաց տարբերութիւն մը ծագեր
է, Լորա Պրեզիտիլտ և իւր քանի
մ'ընկերակիցը Ռուսաց արշաւանքը
պատերազմաւ արգիւշտու կուսակից
են եղեր, իսկ Լորա Սոյիզպըրի
և ուրիշները պատերազմի դէմ են : Լորա
Պրեզիտիլտի համար որպէս թէ անձ-
նական տկարութեան պատճառաւ
հրաժարման զրոյցներ ալ լսուեցան,
բայց դեռ հաստատութիւն չգտան :
Գուցէ Անդրուի տակաւին սպասէ որ-
պէս զի պատերազմի բաղդն աւելի
պարզուի, քանի ներկայ վիճակին
մէջ թերեւս միջամտութեան ժամը
դեռ հոսած չհամարի : Անդրուի և
Սուսարուի մէջ միաբանութեան մը զը-
րոյցներն Եւրոպական լրագրաց մէջ
երկար խորհրդածութեանց նիւթ ե-
ղած են : Այս երկու տերութիւնը
համաձայնութեամբ պիտի շարժին ե-
ղեր, բայց ինչ կըրպով, տակաւին
չենք կրնար ըսել :

Տօգրուածայի կողմը Ռուսը Բիւս-
թէնճէն դրաւելէ ետեւ տեղական
վարչութիւն մը հաստատեցին հոն :
Թուրքայի նախկին հիւպատոս Պ. Պէ-
լուէրօօլի քաղաքային կառավարիչ
անուաներ է Բիւսթէնճէի, ուր գտնու-
մը խաղախ թողուր է Անատոլիոս—
քէյի շրջակայքն, որք ամեն օր քը-
սանական պահակ կըրկեն Բիւսթէն-
ճէի քաղաքը Կերեկի որ Ռուսը պատ-
րաստ կը կենան Բիւսթէնճէն պար-
պելու : Եթէ Օսմանեան նաւատորմը
զայն ռաբակոծէ : Թէ և շատերը Ռու-
սաց գրաւած տեղերն անգթութիւն
ներ և անկարգութիւններ գործուի-
լը կը ծանուցանէին, բայց Սթամբուլ
քաղաքին առած տեղեկութեանց նա-
խելով Բիւսթէնճէի կողմը գտնուող
խաղախներն որոց հրամանատարը փա-
րիկ Ռուսական գեապան Օրլոֆ կ'ը-

սին որդի Օրլոֆ զնդապետն է, սաս-
տիկ կարգապահութեամբ կը շարժին
եղեր : Այս հրամանատարը Պուրդար-
ներէն անկարգութիւն գործողները
խստիւ պատժեր է : Պուրդար մը թուր-
քի մ'երկու մատը կտրած ըլլալուն
համար հրացանի բռնուելու դատա-
պարտուէր է : Ուրիշ հինգ Պուրդար
ալ թուրքաց ֆէսերը գլխունուն կոր
զերնուն համար 23 ակնքնութի (եր-
կաթածայր խարաղան) հարուած ուտե-
լու դատապարտուէր են : Գաղաքային
կառավարիչը զանազան լեղուններով և
Ալեքսանդր կայսեր ստորագրութեամբ
յայտարարութիւն մը հրատարակեր է
բնակիչները հանդարտութեան հրա-
ւերելով : Մէհմետի և Չէքմալօտայի
մէջ յիսուն հազարի չափ Ռուսը բա-
նակած են երեք հարիւր Բորսիլ թըն-
դանօթով : Անցեալ չորեքշաբթի քը-
սան հազար Ռուսը Մէհմետի և Սի-
լիսթի վրայ քաղեր են : Յիշեալ Մէ-
հմետի քաղաքը, զոր Ռուսը Տօգ-
րուճայի կողմն իրենց կըրքոն ըրած
են, երստէն հազար Ռուսական զօրք
ալ կ'սպասուէր : Տէրութեանց հիւ-
պատոսներէն միայն Անդրուի հիւպա-
ստը Բիւսթէնճէն մեկնելու և երկա-
թուղային տնօրէն Պ. Հարիսի հետ
Ռաբիտ անուն անդրական չոգեհնա-
ւը նստելով վարձաւ եկեր է :

Ահմետ Մուխթար փաշային յու-
լիս 7 թուականաւ մէկ հեռագիրն
հեծեղադրաց կուս մը կը ծանու-
ցանէ, որոյ մէջ Օսմանեան զօրքն յաղ-
թող հանդիսացեր է : Թշնամին յու-
լիս 6 ին թէր—Կէտիկի անուն տեղը
շարժիլ սկսած էր : Մուխթար փաշա
խալոյն Օսմանեան հեծեղադրոն յա-
ռա՛ղ զրկեր է : Ռուսը Կէտիկի
վրայ կը քաղէին : Նոյն միջոցին երկու
կողման հեծեղադրը պատերազմի ըս-
կներ և կուսն երեք ժամ ու կէս
տեւեր է : Չէքմեդ և ուրիշ Օսմանեան
հեծեղադրք սաստիկ յարձակմամբ
Ռուսերն 'ի փոխուստ դարձուցեր և
սուր 'ի ձեռնին մինչև բանակատեղին
վաներ են : Այս տեսնելով Ռուսաց
հրամանատարը վրայ հազարի չափ հե-
ծեղադր գարձեալ հաներ է : Բայց
Մուխթար փաշան առանց թշնամոյն
գիտութեան թնդանօթները զետեղել
տուած ըլլալով, երբ Ռուս հեծեղա-
դրը մօտեցեր է, Օսմանեան թնդա-
նօթաց կրակովն ընդունուէր, և
քան և ութ մեռեալ թողով ետ
գարձեր են : Իսկ Օսմանեան հեծե-
ղադրէն 33 հոգի մեռեր, 38 ալ վի-
րաւորուէր են : Սակեց զատ վաթսուն
երկու մեռեր և քսանի չափ ալ վի-
րաւորուէր են : Չէքմեդներէն հեծե-
ղադրաց գոյմագաւճ Զէքրիա պէյ
և հազարապետ Բէշիւս պէյ վիրա-
ւորուէր են, և Հաճի Մուրատ և
Հաճի Մուսթաֆա պէյերը մեռեր
են : Իսկ Ռուսաց կորուստն երկու
հարիւր յիսունի չափ կը կարծուի :

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանաչու-
ծ տիպը խորագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն խորագիր
— Տարեկան պիտի ուղղուի : Ղալա-
թիս Ստամբուլի հրատարակի թիւ
198, չորս խառն Մասիսի գրասեն-
ճար :

Հանրաժողովը զվարձուած նա-
մակ չընդունաւ :

Մուխթար փաշա իւր բանակատեղին
Ոգ—Փունարէն յառա՛ղ փոխադրելով
Կէտիկիէն ժամ ու կէս հեռաւո-
րութեամբ բլուրի մը վրայ հաստա-
տեր է :

Կարնոյ կուսակալ իմայիլ փաշա-
յին յուլիս 3 թուականաւ մէկ հե-
ռագրաւորը սահմանագրութիւն մօտ
Զայի անուն տեղի երկու կողման
պահակներուն մէջ փաթը կուս մը կը
ծանուցանէ, որ միայն ժամ մը տեւեր
է, բայց առանց կարեւորութեան :

Բեդրապուրիէն կը հեռագրեն թէ
Սարաթովի զօրաբաժինը 12000 մարդ
Հայաստան զրկուէր է գործող բա-
նակին հետ միասնաւ : ասկէց զատ
Տօնի խաղախներէն ալ 20000 մարդ
նոյնպէս Հայաստան կը զրկուին : Այս
զօրութիւններն համեմուն պէս Ռուսը
իրենց առաջին յատակադիւր նորէն
պիտի առնուն, այն է ուղղակի կար-
նոյ վրայ քաղել :

Կըսուի թէ Սիլիսթիոյ Միսթի
զօրավարը կովկասեան բանակին հը-
րամանատար պիտի կարգուի Լորիս
Մէլիքօֆի տեղ :

Եւրոպական լրագիրը Ռուսաց Ա-
սիական բանակին մօտերս յարձակո-
ղական դիրք բռնելու հաւանական
չեն համարի : Ուստի կը կարծուի թէ
մէկերկու ամիս վերջն այն գաւառաց
մէջ ձմեռը վրայ գալով պատերազմն
այս տարի չկրնար վերջանալ : Հա-
յաստանի լեռանց մէջ ձմեռն միջոցին
զինուորական շարժումները գրեթէ
անհնար են, հետեւաբար եթէ մինչև
այն ատեն հաշտութիւն չլինի, գոր-
ծը դալ տարուան կը մնայ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 20 յուլիս .
Լորա Տէրպի երկի տառնարանութիւն
մ'ընելով՝ րաւ թէ Անդրուի նաւա-
տորմին Պէլրա գրկուելուն վրայ բացառ-
ութիւն ոչ տրուած է և ոչ խնդրուած :
Հոտմ 20 յուլիս .
Իտալական նաւախուռը Փարէնիս
գնաց :

Նիւ-Եօքը 20 յուլիս .
Ամերիկայի երկաթուղեաց պաշտօն-
եաներն առ հասարակ արխատութիւնը
զադրեցուցին, որով շատ գիծերու վրայ
երթեւեկութիւնն ընդհատեցաւ : Պալմի-
մօրի մէջ կուս ծագելով 10 հոգի մեռան,
50 ալ վիրաւորեցան :

Պէլրա 21 յուլիս .
Ազգային ժողովը պատերազմին ժա-
մանակ կառավարութեան ձեռք առած
միջոցներուն և ծախսը համար փոխարի-
նութիւն մը շնորհեց մեծապետութեան :

Լոնտոն 21 յուլիս .
Այսօր նախարարաց խորհուրդ մ'ե-
ղաւ, որ երկու ժամէն աւելի տեւեց :
Կըսուի թէ կարեւոր որոշմունք եղեր են,
բայց զրոյցները խաղաղական են :

Փոնտու 21 յուլիս .
Ֆլորիդ Խաղախին փաշան հրամա-
րական առաւ առաջին նախարարութիւն :

Նէ, և Ֆէրիգ Մուսթաֆա Պէն-Խոսայիլ փաշան առաջին նախարար անուանեցաւ: Խոսայիտար փաշան ալ արտաքին գործոց նախարար անուանեցաւ:

Վաշինկթոն 21 յուլիս.
Աշխատութիւնը դադարեցնող երկաթուղեաց գործակալներէն 5000 խոտաբարձ ազգային պաշտօնական ղեկավարաց վերջաց յարձակեցան այլ և այլ տեղեր: Աշխատութիւնէ զազարու մը կը ծառայի բոլոր երկրին մէջ:

Վիեննա 21 յուլիս.
Չրոյց կայ թէ յառաջիկայ աշնան դեսպանախորհուրդ մը պիտի գումարի ի վիեննա՝ Արեւելեան գործոց կարգադրութեան համար:

Պրէսթ 22 յուլիս.
Յունիս Յէն ի վեր հոս սպասող Ռուս պատերազմական երուն վերջինն այս առաւօտ Պրէսթէն մեկնեցաւ:

Լոնտոն 22 յուլիս.
Մեծ տպագրութիւն արտադրեցաւ այսօր այն հրատարակութեան վրայ թէ երեք փոխադրական մեծ շողեռաներու հրաման եղբէր որ չորեքշաբթի օրը ճանաչուց երկու պատրաստութիւն: Յիշեալ նաւերը կրնան 9000 զօրք փոխադրել հանդերձ անոնց համար պէտք եղած ռազմավարութեամբ: Երթալու տեղերին յայտնի է, թայց կարծիք կայ թէ Մալթա պիտի երթան:

Սակայն Միւս կողմանէ Մալթայի դուրսնոցներն ամբողջապէս ինչ արդէն հոն գտնուող 5 հազար զօրք, և պատճառ մը չկայ ասոյցապաշտական նպատակաւ դանձուր հոն բանակեցնելու: Ճիւղալթաւրի ամրոցն ալ, ուր չորս հազար զօրք կայ, նոր զօրքերու համար տեղ չունի: Հետեւաւոր աստիճանը բացէ ուրեք ենթադրութեան:

Լոնտոն 23 յուլիս.
Լորտերուն խորհրդարանին մէջ Լորտ Տէրպլի Լորտ Կլաւիլի պատասխանելով յայտնեց թէ Միջերկրականի անդրկական զինքերուն պաշտպան զօրքը մինչև իսկ սովորական ժամանակներու համար պէտք եղած թիւը չունենալով, Եւրոպայի անդուստղ և շինարարութեան տուաւ թէ այդ թիւին յաջորդ փոխարինչ էր: Այս պատճառաւ հարկ եղաւ երեք հազար մարդ զինելով այլ և այլ կէտերու մէջ բաժնել: Այս է, յաւելցուց Լորտ Տէրպլի, զօրք զինելու մասին լրացրաց տուած լուրին միակ հիմը:

Երեսփոխանաց ժողովին մէջ ալ Արք Սէրպիֆորտ Նորթֆոլտ նոյն բացատրութիւնները տուաւ այն խնդրոյն վրայ:

Նիւ-Եորք 23 յուլիս.
Փիցպուրի երկաթուղեայն կայարանն հրկիզեցաւ աշխատութիւնը դադարեցնող ներուռն ձեռամբ: Վնասը 4 միլիոն տօլարի կը հասնի: Փիցպուրի օստիկանութեան տեսուչն ստանձնեցաւ, և կատարեալ անխիտանութիւն տիրած է քաղաքին մէջ:

Լոնտոն 23 յուլիս.

Օտմ. Բոնո.	9 1/8
Փոխ. 1865	9 1/2
" 1869	9 1/4
" 1871	36
" 1872	46
" 1873	9 1/8
Եզիպա.	38
Անդ. Բոնո.	94 5/16

Ահա տոնի նախորդ Մեծ-Խոսայիլ քսո Միւսթաֆա փաշային առ Անգլիական թաղի լրագիրն ուղղած նամակը, զոր անցեալ շաբթու հետեւ գիրը կը ծանուցանէր:

Տէր.
Հետադիւրս արդէն Եւրոպայի ամեն կողմէն ծառայեց Ռուսաց գործած անդամութիւններն յԱսիա, յԵւրոպա և ի Սե ծով, ուր անուարական անխիտան նաւեր վառուցով օդն հանեցին մէջի նաւաստիներովն հանդերձ: Իսլամաց զէմ ունեցած աւերիչ կատաղութիւններն ալ հիւանդանոցները կը յարգէ, ոչ աղօթից նուիրեալ տաճարներն, ոչ ալ հասարակաց օգտին վերաբերեալ շէնքերը:

Գարատաղեայն Ռուսոյ դաշնակիցն ըլլալով, անոր պաշտօնին կրցածնուն չափաւ օժանդակել կը կարծեն: Թուրք գեւորներուն քիթն ու ակնաչնքը սոսկալի կերպիւ կարտնուել: Պաշտպան Ռուսոյ խոստմանքին մոլորելով, ասիկց քանի մը շաբաթ առաջ հանց պատճառաւ թողւած ծերունի խալիֆները ջարդելէ ետեւ, հիմա ալ Գանուր եղբւրքը Ռուսաց զբարեւած քաղաքներուն խալիֆ բնակիչները կը ջարդեն:

Իսկ Պաշտպան մէջ նոյն չափատակութիւնները կը կատարուին, որք անցեալ տարուան ապստամբութեան սկզբնաւորութիւնը նշանաւոր ըլլին, և զժողովարար այն աստիճան ի զայրոյթ գրգռեցին իսլամներն այնպիսի ժամանակ մը, որ խորհուրդ կը տրուէր Գրան որ Պաշտպան ապստամբութեան կարեւորութիւն չափ և խալիֆ խորհուրդ անոր գէտ:

Այնչափ խօսք եղաւ Եւրոպայի մէջ թուրքաց անդամութիւններուն վրայ, որք եթէ մինչև աստիճան մ'առուգութիւն ունէին, Պաշտպան անդամութիւններուն ուղղակի հետեանքն էին բացառիկ պարագայից մէջ, որ վերջապէս ապստամբութեան այդ աստիճան կերպարանքը բոլորովին մոռցուեցաւ:

Եւ տհա պայտէս իմ երկրիս կողմէ վտրութեան գործակալն գործերն, և մասնաւորաց վրիժառութեան գործերը զորս կատարութիւնը գատարարեց ու պատճեց, թուրքաց զէմ անխիտան յարձակմանը բնաւան և անխիտանայն պատերազմի մ'ալ պատարակ եղան, այն պատերազմներէն միոյն, որոց Եւրոպա սովորեցաւ ձեռն ի ծոց հանդիստեսնելի, և որոց ամենն ալ իրենց քիչ շատ հեռաւոր հետեանք մնաւ բերին նոյն իսկ անոնց՝ որք կրնային արդեւոր և թոյլ տալին:

Յուսամ որ իմ երկրիս ընկճեալ շէնքերն այս պատերազմին, ինչպէս կը յուսան մեր թշնամիք: Արդէն տարիէ մ'ի վեր ցոյց տուաւ և արար ալ ցոյց կուտայ այնպիսի կորով մ'ալ հարեւարութիւն, որ բնաւ մէկ վայրկեան սուտ չեղաւ: Իւր հողին վրայ ոտն առ ոտն պիտի կուտի թշնամուցն հետ, և եթէ վերջապէս ընկճի, ինքն որ դաշնակիցներ չպիտի ունենայ, սակայն պարտեալներ պիտի ունենայ իւր հետ:

Բլումպէր ՄԻՏՆԱՅ 10 յուլիս 1877

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ձինուորական մերձին տնօրէնութեանց պատճառաւ Եւրոպական թուրքիոյ Օսմանեան զօրութիւններն երեք զատ բանակի և հրամանատարութեանց բաժնուեցան:

1. Գանուրեան բանակ, հրամանատար Մէհմէտ Ալի փաշա *.
2. Վիտինի բանակ, հրամանատար Օսման փաշա.
3. Աղբիւնու պօլոյ բանակ, հրամանատար Սիւլէյման փաշա:

Վեհ Սուլթանը Գանուրի և Աղբիւնու պօլոյ բանակաց հրամանատար Մէհմէտ Ալի և Սիւլէյման փաշաներուն արածութիւն տուաւ, որ քաջութեամբ նշանաւոր հանգիստացող զօրականաց և սպայից այլ և այլ կարգի պատուանշաններ և մինչև ֆէրիզութեան աստիճան չնորհելու իշխանութիւն ունենան: Բանակին ծառայող քաղաքային պաշտօնատարաց ալ մինչև իւրաքի առաջին աստիճան տարու կարող պիտի ըլլան: Իսկ յոռի կամ միատակար ընթացից մէջ գտնուողներն ալ պիտի կրնան մինչև իսկ մահուամբ պատժել:

Կըսուի թէ Վեհ Սուլթանը հրաման տուեր է Մէհմէտ Ալի փաշային, որ գաղափարներ և պատժող ենթակից Ահմէտ Համիդ փաշան, որ Ձիւթով պաշտպանելու պաշտօն ունենալով, Ռուսաց Գանուրեան անցած ժամանակ անոնց զէմ գնող Օսմանեան վաշտին օգնութեան չէ գիւմը իւր ձեռքն կ'առ զօրութեամբ, որ թշնամին յետո միշտ բաւական էր:

Պար Տիւ Պօսթօր կըսէ թէ նախորդ Սէրտար Էրթէմ Ապաիւր Բէրիւ փաշան Բէթօթահեա պիտի զբրկուի, պատերազմական գործոց նախարար Բէթիֆ փաշան ալ Պրուստ:

Ճէրիտէի Հովատիս կըսէ թէ Դանուրի նաւապետներն հրամանատար Հաճի Վէսիմ փաշան Կ. Պոլիս կուռեցաւ բացառութիւն ուղղելու համար թէ ինչ պատճառաւ. Դանուրի վրայ Ռուսաց չինամ կամուրջը չկըրցաւ քանից:

* Այս անձը Գերմանիա ծնած է Գաղղիացի ծնողքէ. հայրը Տիւրքաւ կը կոչուէր: Տղայութեան ժամանակ Կ. Պոլիս եկած, և ժամանակի ետեւ իսլամութեան կոտորովի պիտուութեան մտած է, ուր իւր քաջութեամբ օրէ օր յառաջանալով ասիկց քանի մը տարի առաջ Ֆէրիզութեան հասած էր:

Գանուրեան բանակին նորընտիր հրամանատար Մէհմէտ Ալի փաշային, ուրբաթ օրը Վեհ Սուլթանին ներկայացած ժամանակ Ն. Կ. Վեհափաշա թիւնն ակնակաւ տուր մը, երկու ընտիր նոյնք, երկու գիւտակ և ծախու ծախուց համար գրամաց դուր մը շնորհեց անոր:

Սիւլթանը լրագիրն խօսքին նախելով, Ռուսաց զօրքերն սուպատակութիւն չեն ընէր. խաղաղներն իսկ իրենց անցած տեղերը կ'զգուշանան ցանաւած արտերու մէջէն անցնել, որպէս զի տանակի չըլլան, իսկ թաւարներն ընդհակառակն հաճոյք մը կը համարին արտերն աւելցնել: Չէրքէնը ձիեր ու կովեր յովաւորակելով կը բաւականանան. ոչխարները չեն առնուր, որպէս զի զանաք վարելու համար ժամանակ չկ'որնցնեն: Իսկ անձերու շատ չեն գալիս. մանաւանդ մարդասպանութիւն չեն ընէր: Երկրին բուն պատուհանները թաւարներն ու Պոլսայներն են: Ասոնց երեսէն սարսափի մէջ են Տալլուայի բոլոր բնակիչք:

Ճէրիտէի Հովատիս կը ծանուցանէ թէ մայրաքաղաքս գտնուած լուր կառածիք երկվարներն առանց խաղաթեան տէրերուն ձեռքէն պիտի առնուին թնդանթ քաջել տալու համար:

Ստաիկանութեան գործերն այս օրերս շատցած ըլլալով, որոշուեցաւ որ յիշեալ նախարարութեան պաշտօնատարները գիւրները կարգաւ իրենց պաշտօնատեղին մնան:

Սիմիցիպէն յուլիս 12 թուով գրուած նամակ մը կը ծանուցանէ թէ Պաշտպան քաղաքային կառավարիչ Բուէն Չէրքասքի ամեն բանէ առաջ Պաշտպաններէ աղգային զինուորութիւն մը կազմելու ձեռնարկած է: Իսկ գաւառական վարչութիւնը Պաշտպանի գաւառացի մեծ մասին գրուած մէկ ետեւ պիտի կազմուի:

Նախ զինուորական գիւտատարութիւն մը պիտի հաստատուի Պաշտպանի մէջ Ասիայի Ռուսական նահանգաց մէկ քանիին մէջ հաստատուածներուն նման:

Չէնք Բուէնը կարողութիւն ունեցող բոլոր Պաշտպան զինուորական ծառայութեան պիտի կոչուին. իսկ իւրաքացիները պիտի առնուին, և երկրէն մեկնողներուն ալ կարուածները պիտի գրուին:

Սպարաքաղաքիս Ռուսաց գեւապանատան առաջին թարգման Պ. Ս. նաւ Ձիւթովի կառավարիչ անուանեցաւ Ռուսաց կայսեր հրամանաւ:

Վեհ Սուլթանին կանայքն և որդիքն 207.200 զրչ նպաստ տուին վերաւորելոյ անուակին:

Կարսի հետ հազարգակցող հեռադրական թէլը գործիւն մը ալ և ալ կողմէ խցած էր, նորագութելով վերստին բանիլ սկսաւ:

Ռուսթ օրը վեց հարիւր վիրաւորեալ զօրական մայրաքաղաքս բերեցան Շքօտայէն Լոյտի շողեռնաւով: Նոյն օրն Աղբիւնու պօլոն ալ բաղմաթիւ վիրաւորք բերուեցան չոգեկաւքով:

Թայիլ լրագիրը Պերլինէն հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Վաշկարի Լմիրը մեռեր և օրդին Բուրի պէյ զահակարէր է: Ձինայ

զօրքերն յամրաբար կը յառաջանան Քաշկարի երկրին մէջ:

Տպագրական տեսչութեան առ լրագիրս ուղղեալ նոր աղբ մը կը ծանուցանէ թէ լրագիրք ոմանք, արդէն իրենց տրուած պատուէրին հակառակ՝ զինուորական շարժմանց վրայ լուրեր և հասարակաց զգուշումն յազող զրոյցներ հրատարակելը շարունակելով, տպագրական տեսչութիւնը բարձրագոյն հրամանաւ և վերջին անգամ կը հրաւիրէ բոլոր լրագրաց խմագիրներն՝ որ զինուորական շարժմանց վրայ խօսակէ և նպաստաւոր կամ աննպաստ սուտ լուրեր հրատարակելէ բացարձակապէս զգուշանան: Այս պատուէրին հակառակ վարուող թերթին անմիջապէս պիտի խափանի: Եւ որովհետեւ ուրիշին յոռի գործը կամ նախընթացը չկրնար աղբարացուցման փոստ համարուիլ, յանցաւոր թերթ մը չկրնար ուրիշ թերթի մ'անհնազանդութիւնն օրինակ բռնելով ինքիւնքն արգարացնել:

Յունական Մէթորիս միսիս լրագիրը կայսերական կառավարութեանց զէմ թշնամիական յոգեւածներ հրատարակելու պատճառաւ՝ զինուորական տանին հրամանաւ երկու ամիս զազրեցաւ:

Վեհ Վարդան պէյ կը ծանուցանէ մեզ թէ Մամուլ լրագրին յոգեւած տալը գաղթեցնելով թէճէմանը Էֆէնդար լրագրին մէջ գրել ըսկըսած է:

Գահութեամբ կը ծանուցանենք թէ Լրագրայ խմագիր Ն. Ռիւպէնտահեան Էֆէնտին Ս. Պատրիարք հօր բարեխօսական միջնորդութեան շնորհիւ կիրակի օրը բանտէն արձակուեցաւ, 12 օր արգիլեալ մնալէ ետեւ:

Կայսերական հրամանաւ՝ Վերաքննութեան (Իսթինաֆ) ատենին եղեռնագատ բաժնին անգամ Ապաիւր-Համիտ Էֆէնտին Պոլսոյ պատժական տանին նախագահ անուանեցաւ:

Ծովակալութեան խորհուրդը զօրվային խորհուրդ (Շուրայի Պահրիէ) պիտի կոչուի:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
11 յուլիս. երկուշաբթի իրիկուն	10. 9
12 յուլիս. երեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	10. 7
ժամ 6 ին	10. 7
Բուսիլի երկաթուղի	Փր. 27
Թիֆլիսայրամ	Իր. 177 1/2

ԸՆԹԱՅԻ ԱՐԹԱՅԻ

Կ. Պոլիս 11 յուլիս	
Ստիլթէ Եւրոպայի բաժ. Անգլ. Ժր. 3.	3
Կ. Պոլիսայրամ Եւր. 1.25	
Կ. Պոլիսայրամ Եւր. 2.27	
Կ. Պոլիսայրամ Եւր. 2.	
Կ. Պոլիսայրամ Եւր. 3.	
Կ. Պոլիսայրամ Եւր. 30	
Կ. Պոլիսայրամ Եւր. 51	
Կ. Պոլիսայրամ Եւր. 46	
Կ. Պոլիսայրամ Եւր. 46	
Կ. Պոլիսայրամ Եւր. 45	
Կ. Պոլիսայրամ Եւր. 4 15	

ԸՆԹԱՅԻ ԴԻԱՄՈՑ

11 յուլիս	
Անգլ. Ժր. 109	35
Եւր. 87	33
Իսթ. 89	25
Կ. Պոլիսայրամ Եւր. 51	15
Կ. Պոլիսայրամ Եւր. 47	
Կ. Պոլիսայրամ Եւր. 477	

Ա. Զ. Գ. Ա. ՅԻՆ

Կարնոյ վիւրայի Օսմանեան երեսփոխան Գանիէ Էֆէնտի խորհուրդն և հրամանաւ Էֆէնտի Պաշտպան

2 Խակ. Գուդի. Պէյլէր. Չէնիէք. Վանիք. Գանտիլի, 32
 Ա. Հիսար, Գանի. Բաշապ. Պէյթօզ,
 (Ուրբաթ օրերը Բ. Ժառա մահ.)
 9 Գուգի. Պէյլ. Չէնի. Վանիքէօյ Ա. Հիսար, Գանի. 24
 Բաշապ. Պէյթօզ, (Բաշ. ուրբաթէ),
 10 30 Գուգի. Պէյլ. Չէնի. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, 32
 Գանի. Բ. Ժառա մահ. Բաշ. Պէյթօզ, Քարապ. Պէյթ.
 Ժիքաէրէ, (Ուրբաթ օրերը ժամը 10 1/4 ին.),
 14 15 Գուգի. Պէյլ. Չէնի. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, 24
 Գանի. Բաշապ. Պէյթօզ,
 14 40 Գապաթ. Գուգի. Պէյլ. Չէնի. Վանիք. Պէյպէք. 49